ԹԻՎ 10 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 7-Ա

22 սեպտեմբերի 2023թ.
ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Երևանի ավագանու ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևանի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորվել է թվով 55 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 55 տեղամասային կենտրոն և կազմավորվել թվով 55 տեղամասային ընտրական հանձնաժողով:

Թվով 55 տեղամասերից 33 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ 10/01, 10/03, 10/05, 10/08, 1009, 10/10, 10/11,10/13, 10/16, 10/17, 10/18, 10/20, 10/21, 10/23, 10/25, 10/26, 10/27, 10/28, 10/29, 10/0, 10/31, 10/32, 10/33, 10/34, 10/35, 10/36, 10/38, 10/39, 10/40, 10/44, 10/46, 10/47 և 10/48:

Մյուս տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

Թիվ 10/02, 10/45, 10/51 և 10/54 տեղամասերում տեղամասային ընտրական /հանձնաժողովի գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

1) ««Ապրելու երկիր» կուսակցության վստահված անձ Արաքսյա Պետրոսյան-Քվեաթերթիկները հերթականությամբ չտալու համար, քվեաթերթիկ 2-ը»:
2) «Մերոպյան Մարիամ՝ «Ապրելու երկիր»- հանձնաժողովի անդամը մոռացել էր տրամադրել ծրարը»:
3) «Աբաջյան Գրիգոր՝ Հասարակական դաշինք-քվեախցիկում բացակայում էր քվեաթերթիկների առկայությունը 09. 01»
4) «Սահակյան Լիզա՝ Հասարակական դաշինք-քվեախցիկում բացակայում էր քվեաթեիթիկների առկայությունը, 09. 01»:
5) «Բոյախչյան Արտուր Արմայիսի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն-Արձանագրել է որ ՔՊ քվեաթերթիկը առկա չէր քաղաքացու

քվեաթերթիկների մեջ: Այլ նշումներ՝ Տրվել է նոր խմբաքանակ և քաղաքացին քվեարկել է»:

Թիվ 10/02 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

6) «Սիրադեղյան Զեփյուռ՝ Ականատես դիտորդական առաքելություն-Դիտորդը խնդրում է գրանցել այցը ցուցակում լինելու, բայց սարքում չլինելու պատճառով չի ընտրել, անձը հրաժարվում է տեղեկանք վերցնելուց: Այլ նշումներ՝ միջադեպը գրանցվել է, վերցրել է և ընտրել»:

Թիվ 10/04 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

7) ««Հանրային ձայն» կուսակցություն՝ Ներսիսյան Էմիլիյա Նորայրի-եկել է գրանցված այցելուն և ցանկանում էր ընտրացուցակներից ինչ-որ ճշտում անել 7-րդ փողոցից, թե ինչքան մասնակցություն է եղել»:

Թիվ 10/06 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

8) ««Մայր Հայաստան» դաշինքի վստահված անձ՝ Անդրանիկ Հովսեփի Ներսիսյան՝ 13. 45-ին խնդրել է տեղամասի նախագահին տրամադրել թիվ, վերջինս հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ 14. 00-ին կհայտնի»:

Թիվ 10/07, 10/22 և 10/54 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

9) «Պետրոսյան Արամ Ռազմիկի. «Հաղթանակ» կուսակցություն՝ հաշվարկման ժամանակ դրոշմանիշով ծրարի մեջ առկա չի եղել քվեաթերթիկը»:

10) «Անկախ դիտորդական հասարակական դաշինք-դատարկ ծրարը դրոշմանիշով մարվելու փոխարեն գցվել է քվեատուփ: Այլ նշումներ՝ քաղաքացին ցանկանում էր իր ձայնը համարել անվավեր և ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցվի ծրարին և գցի քվեատուփի մեջ»:

11) «Մելքոնյան Մարիամ- հանձնաժողովի անդամ-Քաղաքացին վերցրել է կտրոնը /VAD03281158/, քվեատուփին մոտեցել է առանց քվեաթերթիկի, դատարկ ծրարով»:

Թիվ 10/12 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը.

12) ««Ապրելու երկիր» կուսակցություն՝ Գայանե Պետրոսյան-ընտրողը պատահաբար պատռել է կտրոնը, որը արձանագրվեց»:

Թիվ 10/12 և 10/50 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները

13) ««Ապրելու երկիր» կուսակցություն՝ Սյուզաննա Ավետիսյան-Ընտրատեղամասի նախագահը տևական ժամանակ խոչընդոտում էր վստահված անձի՝ իմ պարտականությունների կատարմանը՝ վերցնելով մատյանը և թույլ չտալով այն նայելու: Քանի որ ես դիտարկում էի քաղաքացուն ուղեկցող քաղաքացին ընտրողի կարծիքին հակառակ պարտադրեց իր փոխարեն ընտրել և երկրորդ անգամ ընտրարատեղամաս գալուն»:

14) «Կիրակոսյան Հայկ Սաշայի 10/50 ՏԸՀ նախագահ 09. 00՝-«Հայաքվե» դիտորդական առաքելության անդամը շատ մոտ էր կանգնած ընտրողների մատյանին և նախագահի զգուշացմամբ հեռացավ սեղանից»:

Թիվ 10/14 և 10/15 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

15) «Մկրտչյան Հայկ Հրաչի՝ «Մայր Հայաստան» դաշինք, վստահված անձ՝ Գրեթե բոլոր ընտրողներին դրսում դիմավորում է, ուղեկցում ներս և ողջագուրվում»:
16) ««Ապրելու երկիր» կուսակցության վստահված անձը՝ Լիլիթ Ավետիսյանը հայտնում է այն մասին, որ ՔՊ կուսակցության վստահված անձը՝ Բարխուդարյան Սարգիսը դուրս է գալիս անընդհատ, ողջունում ընտրողներին և ճանապարհում: ժամը 9,54»:

Թիվ 10/14 և 10/15 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

17) «966 համարի կտրոնի քաղաքացին մոտեցել է և արձանագրել, որ իր անվան դիմաց ստորագրված է-Պարզեցինք, որ 996 համարի կտրոնի քաղաքացին ստորագրել է իր փոխարեն, Հանձնաժողովի անդամը շփոթել է կտրոնների համարները»:
18) «Անկախ դիտորդ հասարակական դաշինք՝ Վարդանուշ Հայրապետյանը արձանագրում է այն, որ, ընտրողների ցուցակում ընտրողի փոխարեն ստորագրել է հանձնաժողովի անդամը: Ժամը 21.20-ին լրացում ընտրողների ցուցակ այլ նշումներ բաժնում այն հանձնաժողովի անդամի կողմից ում անհատական կնիքը եղել է տվյալ բացակայության ստորագրության դիմաց»:

Թիվ 10/15 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը.

19) ««Ապրելու երկիր» կուսակցության վստահված անձը՝ Լիլիթ Ավետիսյանը նկարահանել է, որ անձը կատարում է բացահայտ ընտրություն: Ժամը 12.31: Քվեախցիկից դուրս, «Ազգային առաջընթաց» կուսակցության վստահված անձը՝ Լիլիթ Մանուկյանը հանձնաժողով նախագահը մոտենում է քվեատուփին և օգնում կատարել ընտրություն, ժամը 12.46»:
20) «Ի հակասում «Ազգային առաջընթաց» կուսակցության վստահված անձ Լիլիթ Մանուկյանի արձանագրությունը հանձնաժողովի նախագահ Սուսաննա Մկրտչյանը փաստում է, որ չի մտել քվեախցիկ այլ կողմից ծանոթացրել է ընտրության կարգին: Ժամը 12.57»:
21) «Ժամը 9.55 Մուսյակ Լիլիթ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքից արձանագրում է, որ ներկա է եղել քվեարկության գաղտնիության միջադեպի՝ ընտրողը իրականացրել է քվեարկության քվեախցիկից դուրս, նախագահը նրա դիմաց լինելով ոչինչ չի ձեռնարկել, անձամբ տեսել եմ ում է քվեարկել, դիտորդ, ականատես՝ Մարգարիտա Հարությունյան, Մարտիրոսյան Սուրեն»:
22) «Ի հակասում Մուսյակ Լիլիթի՝ հանձնաժողովի նախագահը առարակում է, որ չի եղել նման դեպք, պարզապես վատ լուսավորության պայմաններում ընտրողը չէր կարողանում քվեարկել, ապահովել ենք լուսավորությունը հեռախոսով քվեախցիկի վերևի մասից: Ընտրողը ուներ առողջական խնդիրներ: Ժամը 19.57»:

Թիվ 10/15 և 10/50 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները.

23) «Ժամը 20.11 արձանագրել ենք, որ դրոշմանիշը կպել է սեղանին և վնասվել է, հնարավոր չի եղել պոկել, որի մասին տեղյակ են հանձնաժողովի

անդամները: Նախագահ Մկրտչյան Սուսաննա, քարտուղար՝ Բաբայան Ժասմեն»:

24) «Աբրահամյան Արտյոմ Միերի՝ «Հայաքվե» դիտորդական առաքելություն, Կիրակոսյան Հայկ Սաշայի 10/50 ՏԸՀ նախագահ 09.10՝ Ընտրողի՝ ծրարին դիպչելու անփութության պատճառով ինքնակպչուն դրոշմանիշը կպավ ծրարին և ոչ թե անկյունից երևացող քվեաթերթիկին»:

25) «Կիրակոսյան Հայկ Սաշայի 10/50 ՏԸՀ նախագահ 05.30՝ Ընտրողի՝ ծրարին դիպչելու անփութության պատճառով ինքնակպչուն դրոշմանիշը կպավ ծրարին, որը մարվեց իմ կողմից: Այլ նշումներ՝ ընտրողին հնարարավորություն տրվեց նորից ընտրելու»:

Թիվ 10/19, 10/24, 10/37 և 10/55 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

26) «Աննա Բալյան Մարտիրոսի՝ ՔՊԿ-Ընտրատարածքը փոքր էր, հարմար ընտրության կազմակերպման համար»:

27) «Հայկ Քերոբյան Հովհաննեսի /Ազգային առաջընթաց կուսակցություն/- Ծրարը դժվար էր բացվում»:

28) «Տաթև Հակոբի Հակոբյան՝ ՔՊ կուսակացություն, հանձնաժողովի քարտուղար՝ քվեատուփը կնքելու պահին նախագահի ձեռքում ռետինե ամրակը կոտրվեց /h. 0061321/»: Պողոսյան Արտակին և Հարությունյան Արմինեն համապատասխանաբար փոխարինում են Սարուխանյան Արան և Կարապետյան Գագիկը»:

29) «ժ. 15,00-ին վերադարձել են Պողոսյան Արտակը և Հարությունյան Արմինեն»:

30) «Հայրապետյան Վարդանուշ Սրապի՝ «Անկախ դիտորդ դաշինք»: Ջնջված է և ստորագրված է ՏԸՀ հնձնաժողովի նախագահի կողմից, վրիպակ է տեղի ունեցել է դիտորդի գրանցման էջի փոխրեն լրացվել է գրառումների բաժինը:

31) «Անկախ դիտորդ՝ Սահակյան Լիզա՝ 14,25-ին ՔՊ վստահված անձը եկել է 10/55-ից սրճեփը տանելու, դիտորդը նկատել է միջանցքում»:

Թիվ 10/41 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

32) ««Հանրային ձայն» կուսակցություն՝ Երկու իրանահայ քաղաքացի իրենց կոնվենցիոն ճամփորդական անձնագրով մոտեցել են սարքին՝ մերժվել է, որի ընթացքում դիտորդը նկարահանել է, սակայն հետո նրանից պահանջել են ջնջել այն»:

Թիվ 10/42 և 10/53 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները.

33) «Ականատես» դիտորդական առաքելություն՝ Սասուն Դերդերյան՝ ընտրատարածքում ընտրախցիկների թվի վերաբերյալ»:

34) «Աբաջյան Գրիգոր՝ Հասարակական դաշինք-քվեատուփը դրված էր լուսամուտի մոտ /բաց էր/, որը տեղափոխվեց:

Թիվ 10/43 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

35) «Դերդերյան Սասուն՝ Դիտորդի կարծիքով քվեաթերթիկը վավեր է, սակայն հանձնաժողովի քվեարկությամբ այն համարվել է անվավեր»:

36) «Թորոսյան Տաթևիկ՝ Վստահված անձը պնդում է, որ քվեաթերթիկը միտումնավոր ճմրթված էր և համարում է անվավեր»:

37) «Հանձնաժողովի անդամներ՝ Հանձնաժողովի անդամները պնդում են, որ քվեաթերթիկը միտումնավոր էր ճմրթված»:

Թիվ 10/43 և 10/45 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները.

38) «Ժ. 14-16-ի հերթափոխին՝ «Քաղաքացին բողոքում է, որ իր ազգականը մահացած է, սակայն անունը կա ցուցակներում՝ «Ապրելու երկիր» կուսակցություն, սակայն քաղաքացին չի ներկայացրել մահվան վկայական»:

39) «Ռեստևվանյան Սոնա՝ Քաղաքացին Լևոն Ջալալայնը՝ բնակվող Ավանեսովի փող. 4/34 հասցեում, հայտնում է, որ իր հասցեում գրանցված ևս այլ 3 հոգի, որոնցից մեկը արդեն քվեարկել է»:

40) «Ռեստևվանյան Սոնա՝Թյուրիմացությունը տեղում շտկվել է»:

Թիվ 10/49 և 10/50 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները.

41) ««Աբրահամյան Արտյոմ Միերի՝ «Հայաքվե» դիտորդական առաքելություն- Տեսախցիկի տեսադաշտից բացակայում է ընտրական գրանցման գործընթացը: Այլ նշումներ՝ Հանձնաժողովի նախագահը նախապես զգուշացրել է այդ մասին ԿԸՀ»:

42) «Աբրահամյան Արտյոմ Միերի՝ «Հայաքվե» դիտորդական առաքելություն 09.30՝ Տեսախցիկի տեսադաշտից բացակայում է ընտրական գրանցման գործընթացը և քվեատուփերից մեկը: Այլ նշումներ՝ Հանձնաժողովի նախագահի կողմից նախօրոք զգուշացված է եղել, որ տեսախցիկը ճիշտ չի տեղադրված»:

Թիվ 10/52 և 10/54 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները.

43) «Սահակյան Լիզա Հակոբի՝ «Անկախ դիտորդ» դաշինք-ՔՊ 2 վստահված անձ գտնվել են նույն տեղամասում, մեկը՝ առանց բեյջի: Տեղեկացրել եմ հանձնաժողովի նախագահին, նախագահը վերացրել է խախտումը»:

44) «Սահակյան Լիզա Հակոբի՝ «Անկախ դիտորդ» հաարակական դաշինք- Տեղամասում գտնվել է 2 վստահված անձ Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունից, 1 հոգի էլ մուտքի մոտ էր»:

45) «Թովմասյան սերգեյ Վաչագանի՝ «Ուժը հայրենյաց» կուսակցություն- Դիտորդը առանց դուրս գալու ժամը ֆիքսելու դուրս է եկել տեղամասից՝ մուտքի մոտ էր»:

46) «Սահակյան Լիզա Հակոբի՝ «Անկախ դիտորդ» հաարակական դաշինք- «Ապրելու երկիր» կուսակցության թեկնածուն եկել է տեղամաս»:

Թիվ 10/53 և 10/55 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները.

47) «Աբաջյան Գրիգոր՝ Հասարակական դաշինք- Հաշմանդամների համար նախատեսված թեքահարթակը բացակայում էր»:

48) «Հասարակական դաշինք անկախ կազմակերպություն՝ Աղաջանյան Գրիգոր՝Թեքահարթակը մասամբ է մատչելի /ակայն օգնելու դեպքում/ շենքի ներսում 3 աստիճանի վրա չկա թեքահարթակ»:

Թիվ 10/51 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

49) «Սահակյան Լիզա Հակոբի՝ «Անկախ դիտորդ» հաարակական դաշինք- Էլ. սարքը կտրոնը կիսատ է տպել, օգտագործել է համարակալված կտրոն»:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Թիվ 3, 4, 6, 7, 8, 12, 15, 19, 20, 21, 22, 26, 27, 28, 29, 30, 31, 41, 42, 43, 44, 45, 46, 47 և 48 պայմանական համարակալումները կրող գրառումները կա՛մ չեն առնչվում քվեարկության կարգի խախտումներին, կա՛մ նկարագրում են խախտումների կանխման, կա՛մ վերացման հանգամանքներ: Որոշ գրառումներով փաստվում են որոշակի իրավիճակներ կամ հանգամանքներ, որոշ գրառումներ էլ նկարագրում են հանձնաժողովի գործողությունները՝ ուղղված քվեարկության ընթացքը պատշաճ կազմակերպելուն կամ խախտումը վերացնելուն կամ կանխելուն, ուստի դրանցում ներկայացված հանգամանքները չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 1, 2 և 5 պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերում են *Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 10-րդ մասին, այն է, եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկներ ստանալու համար, ինչն էլ արվել է ընտրողի կողմից և իրացվել ընտրողի ընտրական իրավունքը, հետևաբար, տվյալ հանգամանքները չեն կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:*

Թիվ 9, 10 և 11 պայմանական համարակալումը կրող գրառումները վերաբերում են ընտրողների ընտրելու իրավունքին. *արդյունքում լինում են դեպքեր, երբ ինքնաստանձվող դրոշմանիշեր փակցնող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ տեխնիկական սարքավորումից տպված կտրոնը վերցնելուց հետո, հաշվի առնելով ընտրողի ընտրական իրավունքի իրացման գերակայությունը և ընտրական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու պարտավորությունը, ստիպված է լինում գործել իրավիճակով պայմանավորված: Հետևաբար, նշված գրառումները կամ հանգամանքները չեն կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:*

Սույն որոշման թիվ 13 և 14 պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերում են վստահված անձանց իրավունքներին և պարտականություններին: *Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելը արգելվում է: Հետևաբար այս իմաստով տեղամասային հանձնաժողովների նախագահների գործողությունները բխում են օրենքի*

պահանջներից: Ինչ վերաբերում է օգնողների մասին տեղեկատվությանը, ապա հարկ է նշել, որ վերը նշված հոդվածի իմաստով վստահված անձը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, իրավունք ունի ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին: Այսինքն, օրենսդիրը հստակ սահմանել է, թե ի՞նչ ընթացակարգով վստահված անձը կարող է ծանոթանալ ընտրական օրենսդրությամբ ծանոթացման ենթակա ընտրական փաստաթղթերին, հետևաբար, նշված կետում կատարված գրառումները չեն կարող դիտարկվել որպես խախտումներ, քանի որ դրանցով չեն խախտվել Ընտրական օրենսգրքով սահմանված վստահված անձի իրավունքները:

Սույն որոշման թիվ 16 պայմանական համարակալումը կրող գրառման կապակցությամբ, թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նկարագրված հանգամանքի վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին դիմում ներկայացրել է նաև «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որին կցված է եղել էլեկտրոնային կրիչ: Կրիչում առկա էին երկու լուսանկարներ, մեկը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի համապատասխան էջն է, որում գրանցված են վստահված անձինք, մյուսում հավանաբար «Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վստահված անձ՝ Սարգիս Բարխուդարյանի լուսանկարն է: Թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով գրառումը և դիմումը՝ կից լուսանկարներով, անհասկանալի է համարում նկարագրված դրվագի առնչությունը քվեարկության կարգի հետ, հետևապես, արձանագրում է, որ խախտում առկա չէ:

Սույն որոշման թիվ 17 և 18 պայմանական համարակալումները կրող գրառումները *վերաբերում են ընտրողի՝ ընտրական ցուցակներում ստորագրելու կարգին:*

Թիվ 17 պայմանական համարակալումը կրող գրառումը, որը կատարվել է թիվ 10/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, խախտման չի հանգեցրել, կանխվել է, հետևաբար մեկը մյուսի փոխարեն ստորագրելու դեպք տեղի չի ունեցել:

Ինչ վերաբերում է թիվ 18 պայմանական համարակալումը կրող գրառմանը, որը կատարվել է թիվ 10/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, ապա վերաբերում է ընտրողների ցուցակում սխալմամբ այլ անձի փոխարեն ստորագրելուն: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝

«8. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին: Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝

«2. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը՝ տեղեկացնելով տեղամասային ընտ-ական հանձնաժողովի նախագահին, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված և քվեարկության կտրոն ստացած՝ քվեարկությանը չմասնակցած այն ընտրողին, որի տվյալների դիմաց ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ, հնարավորություն է տալիս ստորագրելու ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում՝ իր տվյալների դիմաց՝ ստորագրության կողքին դնելով իր անհատական կնիքը:»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնա-ժողովը փաստում է, որ թույլ է տրվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից ընտրողին ընտրողների ցուցակում գրանցելու սահմանված կարգի, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 2-րդ կետի խախտում: Հետևաբար, թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, արձանագրում է, որ անհրաժեշտ է համարում միջնորդություն ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ թիվ 10/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Ժասմենա Բաբայանի և անդամ՝ Գայանե Գրիգորյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա եղել է եզակի դեպք, ուստի նշված խախտումները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 23, 24 և 25 պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերում են *ինքնասոսնձվող դրոշմանիշերի՝ ծրարների կամ սեղանին պատահական կպչելուն, որոնք տեղի են ունեցել տեղամասերում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ: Բոլոր այդ դեպքերն արձանագրվել են, դրանք բոլորը եղել են անզգուշության արդյունք: Նկարագրված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:*

Սույն որոշման 32-րդ պայմանական համարակալումը կրող գրառումը վերաբերում է Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 11-րդ մասին և 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին: *Ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա գտնվելու վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ: Ընտրական հանձնաժողովների նիստերը (այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը), ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը: Ներկայացված պահանջը վերաբերել է սարքավորման միջոցով տպված կտրոնին, որտեղ արծարծվում են անձի*

անձնական տվյալները, հետևաբար, դիտորդին ներկայացված պահանջը եղել է իրավաչափորի արդյունքում պահպանվել է անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:

Սույն որոշման թիվ 33 և 34 պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերում *են քվեախցիկներին, չնայած գրառման դեպքում նշված է «քվեատուփ», այնուամենայնիվ, գրառման բովանդակությունից ակնհայտ է, որ այն վերաբերում է քվեախցիկին: Համաձայն Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի՝ քվեարկության համար հատկացվում են խցիկներ՝ յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ խցիկ: Թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում գտնվող տեղամասերից յուրաքանչյուրում ընտրողների թիվը 2000-ը չի գերազանցում, հետևաբար, կարող էին տեղադրվել առավելագույնը 3 խցիկ, սակայն, մի քանի տեղամասերում, կապված տեղամասի մակերեսից, ինչպես նաև տեսանկարահանող սարքի տեսադաշտից, տեղադրվել են 2 քվեարկության խցիկներ և ոչ մի նման դեպք չի արձանագրվել, որ խցիկների քանակությունը բավարար չի եղել ընտրական գործընթացը բնականոն հունով կազմակերպելու համար: Ինչ վերաբերում է հ. 10/53 տեղամասում խցիկի՝ պատուհանի մոտ գտնվելուն, ապա հարկ է նշել, որ տեղամասի տեսանկարահանումից ակնհայտ է, որ տեղամասի պատուհանը ավելի բարձր դիրքում է գտնվում քան խցիկի բարձրությունն է, բացի այդ քվեարկության խցիկը բավականին մեծ հեռավորության վրա է գտնվում պատուհանից: Նկարագրված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:*

Սույն որոշման 35, 36 և 37 պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերում են հանձնաժողովի քվեարկությամբ քվեաթերթիկն անվավեր ճանաչելուն: Համաձայն Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր կամ անվավեր լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է ընտրություններին մասնակցող կուսակցության անվանումը, որի օգտին է քվեաթերթիկը: Այն ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը. քվեարկության արդունքում քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ: Այս գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար: Հետևաբար, հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և որևէ խախտում թույլ չի տրվել:

Սույն որոշման 38, 39 և 40 պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերում են ընտրողներին ցուցակներին: Ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար: Հետևաբար, այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ցուցակներում առկա տվյալների փոփոխմանը, ուղղմանը կամ

լրացմանը /բացի ոչ ելեկտրային տվյալների՝ տառասխաներ կամ թվերի սխալներ/ դուրս են տեղամասային ընտրական հանձնաժողովների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթներից և դրանք չեն կարող արձանագրվել՝ որպես խախտումներ:

Սույն որոշման 49 պայմանական համարակալումը կրող գրառումը վերաբերում է Ընտրական օերնսգրքի 66-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության իմաստով *տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում՝ հանձնաժողովի համապատասխան անդամը լրացնում է համարակալված կտրոն՝ վրան նշելով, թե ո՞ր ցուցակի ընտրող է, ցուցակում ընտրողի հերթական համարը, անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին: Հետևաբար, տեխնիկական սարքավորման միջոցով կտրոնի ոչ ամբողջական լինելու պարագայում քվեարկությունը համարակալված կտրոնով իրականացնելը պարտադիր է և բխում է օրենքի պահանջից:*

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասով՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

2. Միջնորդել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել թիվ 10/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար՝ Ժասմենա Վալերիի Բաբայանի և հանձնաժողովի անդամ՝ Գայանե Վիլսոնի Գրիգորյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

Թիվ 10 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Հակոբյան